

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

(1817 - 1900)



Հայագգի հանճարեղ նկարիչ Ռուսական կայսրությունում, Ռուսական կայսրության պատվավոր ծովակալ, Ռուսաստանի կայսերական ակադեմիայի անդամ, համաշխարհային համբավ ունեցող նկարիչ: Առավել հայտնի է իր ծովանկարներով, որոնք կազմում են նրա գործերի կեսից ավելին: Այվագովսկին համարվում է բոլոր ժամանակների ամենամեծ ծովանկարիչներից մեկը:

Հովհաննես Այվագովսկին ծնվել է **Թեոդոսիա** քաղաքում, **Ղրիմում**, աղքատ հայ ընտանիքում: Իր ընտանիքի ազգանունն Այվագյան էր: Նկարչի նկարներից մի քանիսը կրում են այս ստորագրությունը, հայերեն՝ «Հովհաննես Այվագյան»: Նրա՝ որպես նկարչի տաղանդը, իր համար ճանապարհ բացեց դեպի Միսֆերոպոլ քաղաքի գիմնազիա, իսկ հետագայում՝ դեպի **Մանկո Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա**, որը Հովհաննես Այվագովսկին ավարտեց ոսկե մեդալով:

Պարգևների արժանանալով իր վաղ շրջանի բնանկարների ու ծովանկարների համար՝ նա սկսել է նկարել Ղրիմի ծովափնյա քաղաքների պատկերների շարքը: Այնուհետև Այվագովսկին մեկնեց եվրոպական երկրներ: Կյանքի հետագա շրջանում նրա ծովանկարների և նավանկարների շարքերը նրան արժանացրին Ռուսաստանյան նավատորմի մշտական ծառայողը լինելու պատվին: Նա մի քանի պատկեր է նկարել նաև Օսմանյան սուլթանի համար, որոնք ներկայումս թուրքական թանգարաններում են: Թուրքական սուլթանը շքանշանով պարգևատրել է Այվագովսկուն, սակայն, երբ Թուրքիայում 1890-ական թթ. տեղի ունեցան հայերի կոտորածները, Այվագովսկին թուրքական շքանշանը կապեց իր շան վզին, իսկ հետո տարավ և շարտեց ծովը:

Երկարատև ստեղծագործական կյանք ապրելով՝ նա դարձավ ժամանակի առավել հայտնի ռուսական նկարիչը:

Վախճանվել է 1900 թվականին: Իր հաջողակ ստեղծագործական գործունեության ընթացքում վաստակած զգալի գումարներով Այվազովսկին բացել է արվեստի դպրոց և պատկերասրահ իր հարագատ Թեոդոսիա քաղաքում:

Այվազովսկին ստեղծել է շուրջ 6000 կտավ: Աշխատել է շատ արագ, տեսողական վիթխարի հիշողությամբ: Պատկերել է ծովը՝ օրվա տարբեր ժամերին, տարվա բոլոր եղանակներին: Խորապես զգացել և վերարտադրել է ծովային տարերքի անընդգրկելի վեհությունը, հրավառ արևածագն ու արևամուտը, կեսօրյա անդորրը, այլքների ռիթմն ու նրանց վրա խայտասցող լուսնի լույսը: Նրա պատկերները երբեմն նուրբ քնարական են, երբեմն՝ պաթետիկ: Բնությունն արտացոլել է մշտական շարժման և փոփոխության մեջ: Ունեցել է տիեզերական երևույթներ պատկերելու մշտական ձգտում:

Հովհաննես Այվազովսկին ծնվել է Կոստանդին (Գևորգ) և Հռիփսիմե Այվազովսկիների ընտանիքում 1817 թվականի հուլիսի 17(29)-ին: Թեոդոսիայի հայոց եկեղեցու քահանան գրանցել է, որ ծնվեց «Հովհաննեսը՝ Գևորգ Այվազյանի որդին»: Այվազովսկու նախնիները Գալիցիայի հայերից էին, ովքեր XVII դարում Գալիցիա էին գաղթել Արևմտյան Հայաստանից: Հայտնի է, որ նրա ազգականները Լվովի շրջակայքում մեծ հողակտորների սեփականատերեր են եղել: Այդուհանդերձ, Այվազովսկու ծագումն առավել ճշգրիտ արձանագրած որևէ փաստաթուղթ չի պահպանվել: Նրա հայրը Թեոդոսիա տեղափոխվելուց հետո էլ իր ազգանունը շարունակել է գրել լեհականացված ձևով՝ «Գայվազովսկի»: Ինքը՝ Այվազովսկին, ինքնակենսագրության մեջ հոր մասին գրում է, որ նա իր եղբայրների հետ վեճի պատճառով դեռ պատանեկության տարիներին Գալիցիայից տեղափոխվել է Դանուբյան իշխանություններ (Մոլդովիա, Վալախիա), որտեղ զբաղվել է առևտրով: Այդտեղից էլ հետագայում տեղափոխվել է Թեոդոսիա:

Նկարչի հայրը՝ Կոստանդին (Գևորգ) Գրիգորի Այվազովսկին, (1771-1841) Թեոդոսիա տեղափոխվելուց հետո ամուսնացել է տեղացի մի հայուհու՝ Հռիփսիմեի (1784-1860) հետ: Նրանց ամուսնությունից ծնվել են երեք աղջիկ և երկու տղա՝ Հովհաննեսը և Սարգիսը (վերջինս, հետագայում, սրբակրոնության ուխտ ընդունելով, ստացել է **Գաբրիել** անունը): Այվազովսկու առևտրական գործերը սկզբնական շրջանում հաջող են ընթացել, բայց 1812 թվականին ժանտախտի համաճարակի ժամանակ նա սնանկացել է:

Հովհաննես Այվազովսկու նկարչական ու երաժշտական ձիրքերն ի հայտ են եկել դեռ մանկության տարիներից: Մասնավորապես՝ նա ինքնուրույն սովորել է ջութակ նվագել: Թեոդոսիայի ճարտարապետ Յակով Քրիստիանի Կոխը, տղայի գեղարվեստական ձիրքերի վրա առաջինն ուշադրություն դարձնելով՝ հենց ինքն էլ վարպետության առաջին դասերն է տվել նրան: Միաժամանակ ամեն կերպ աջակցել է պատանի տաղանդին, հաճախակի ներկ, մատիտ, թուղթ նվիրել, քաղաքապետին խորհուրդ տվել, որ ուշադրություն դարձնի շնորհալի պատանուն, ով այդ ժամանակ արդեն դարձել էր ապագա նկարչի երկրպագուն:

Այվազովսկին Թեոդոսիայի գավառական ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվել է Միմֆերոպոլի գիմնազիան: Այնուհետև պետության հաշվին սովորել է Մանկագեղարվեստի գեղարվեստի կայսերական ակադեմիայում: Հայտնի է նաև, որ պատանի Այվազովսկու նկարչության առաջին ուսուցիչը եղել է գերմանացիների գաղութում բնակվող նկարիչ Յոհան Լյուդվիգ Գրոսը, ում տված երաշխավորագրերով էլ նա ներկայացել է գեղարվեստի ակադեմիա: Այվազովսկին Պետերբուրգ է ժամանել 1833 թ. օգոստոսի 28-ին: 1835 թվականին «**Ծովը Պետերբուրգի մատույցներում**» և «**Օդը ծովի վրա**» բնանկարների համար արժանացել է արծաթե մեդալի և նշանակվել ֆրանսիացի մոդայիկ բնանկարիչ Ֆիլիպ Տաների օգնականը: Տաների մոտ սովորելու ընթացքում նա, չնայելով վերջինիս արգելքին, շարունակել է ինքնուրույն աշխատել, բնանկարներ ստեղծել, որոնցից հինգը ներկայացրել է գեղարվեստի ակադեմիայի 1936 թվականի աշնանային ցուցահանդեսին: Այդ աշխատանքներն արժանացել են քննադատների բարեհաճ վերաբերմունքին: Բայց, երբ Տաներն Այվազովսկու մասին բողոք ներկայացրեց Տիկոլայ Առաջինին ցարի կարգադրությամբ Այվազովսկու բոլոր գործերը հանվեցին ցուցահանդեսից: Նկարչին ներում է շնորհվում միայն կես տարի անց, և նա ուղարկվում է մարտանկարչության դասարան՝ պրոֆեսոր Ալեքսանդր Իվանի Չաուերվեյդի մոտ՝ ծովային մարտանկարչության պարապմունքների: Ընդամենը մի քանի ամիս սովորելով Չաուերվեյդի դասարանում՝ 1837 թվականի սեպտեմբերին Այվազովսկին «**Անդորրություն**» նկարի համար արժանանում է մեծ ոսկե մեդալի: Դա նրան իրավունք է տալիս երկու տարի ճամփորդելու Ղրիմում և Եվրոպայում:

1838 թ. գարնանը նկարիչը մեկնում է Ղրիմ, որտեղ անցկացնում է երկու տարի: Այստեղ նա ոչ միայն ծովանկարներ, այլև մարտանկարներ է նկարում (մինչև անգամ

մասնակցում է մարտական գործողությունների Չերկեսիի ափին, որտեղ, դիտելով դեսանտի իջեցումը Շախե գետի հովտում, ճեպանկարներ է արել «**Ղեսանտային ջոկատը Սուրաշի հովտում**» նկարի համար): Ի դեպ, Այվազովսկու այս վերջին աշխատանքը, որ նա կատարել էր Կովկասյան ռազմաճակատի ավամերձ հատվածի պետ, գեներալ Ռակսկու առաջարկով, հետագայում ձեռք է բերում Նիկոլայ Առաջինը:

1839 թ. ամռան վերջին Այվազովսկին վերադառնում է Պետերբուրգ, որտեղ սեպտեմբերի 23-ին նրան շնորհվում է գեղարվեստի ակադեմիայի ավարտական վկայական և, բացի այդ, նա ստանում է իր ազնվական առաջին աստիճանը: Այդ նույն ժամանակամիջոցում նա մտերմանում է **Կառլ Բրյուլովի** և **Միխայիլ Գլինկայի** ժամանակաշրջանի արվեստագետների հետ: 1840 թ. հուլիսին Այվազովսկին և գեղարվեստի ակադեմիայի բնակարի դասարանի նրա դասընկեր Վասիլի Շտեյնբերգը մեկնում են **Հոռո**: Ճանապարհին կանգ են առնում **Վենետիկում** և **Ֆլորենցիայում**: Վենետիկում գտնվելու ժամանակ Այվազովսկին այցելում է **Սուրբ Ղազար կղզի**, տեսակցում նաև այստեղ գտնվող եղբորը՝ Գաբրիելին, իսկ Ֆլորենցիայում ծանոթանում է Գոգոլի հետ:

Նկարիչը երկար ժամանակ աշխատել է Հարավային Իտալիայում, մասնավորապես՝ **Սորենտոյում**, որտեղ էլ մշակել է աշխատանքի իր յուրահատուկ ոճը, որի էությունը կայանում էր հետևյալում. բաց օդում մի կարճ ժամանակ աշխատելուց հետո բնակարն ամբողջացնում էր արվեստանոցում՝ մտովի վերարտադրելով տեսածը և լայն տեղ տալով **իմպրովիզացիային**: Այդ կերպ ստեղծված «Քառս» նկարը գնվեց Գրիգորիուս XVI պապի կողմից, ով նկարչին շնորհեց նաև ոսկե մեդալ:



Այվազովսկու ստեղծագործության իտալական շրջանը, ամբողջությամբ վերցրած, պսակվեց հաջողություններով: Քննադատները գովեստի խոսքեր էին շռայլում (մասնավորապես, նրա գործերի մասին շատ բարձր կարծիք է հայտնում **Ռիչյամ Թյորները**), Փարիզի գեղարվեստի ակադեմիան նրան պարգևատրում է ոսկե մեդալով: 1842 թ. սկզբին Այվազովսկին Շվեյցարիայով և Հռենոսի հովտով ուղևորվում է Հոլանդիա, այնտեղից անցնում Անգլիա, իսկ ավելի ուշ այցելում է Փարիզ,

Պորտուգալիա, Իսպանիա: Բիսկայան ծոցում այն նավը, որով ճամփորդում էր նկարիչը, ընկավ փոթորկի մեջ և քիչ էր մնում խորտակվել: Փարիզյան որոշ թերթեր մինչև անգամ գրեցին, թե նավը խորտակվել է, Այվագովսկին էլ՝ գոհվել: Բայց չորս տարի տևած ճամփորդությունը բարեհաջող ավարտվեց, և Այվագովսկին 1844 թ. աշնանը, ողջ-առողջ և հռչակ ու փառք վաստակած, վերադարձավ Ռուսաստան:

1845 թ. Այվագովսկին դառնում է գլխավոր ծովային շտաբի գեղանկարիչը, 1847 թ. Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր, ինչպես նաև եվրոպական մի շարք ակադեմիաների (Հոմերի, Փարիզի, Ֆլորենցիայի, Ամստերդամի, Շտուտգարտի) անդամ:

1848 թվականին Այվագովսկին ամուսնանում է: Նրա առաջին կինը՝ Յուլիա Յակովի Գրևսը, անգլուհի էր, ռուսական ծառայության մեջ գտնվող շտաբ-բժշկի դուստր: Նրանք ունենում են 4 դուստր՝ Ելենա, Սարիա, Ալեքսանդրա և Ժաննա: Ամուսնությունից 12 տարի անց Յուլիա Գրևսը բաժանվում է ամուսնուց այն պատճառով, որ նա չէր ուզում ապրել մայրաքաղաքում: Ամուսնալուծությունը պաշտոնապես ձևակերպվում է 1877 թ.: Երկրորդ կինը Աննա Նիկիտայի (Մկրտչի) Սարկիսովա-Բուռնազյանն էր, որին նկարիչը տեսել էր վերջինիս ամուսնու՝ թեոդոսիացի նշանավոր առևտրականի թաղման ժամանակ՝ 1882 թ.: Երիտասարդ այրու գեղեցկությունն անմիջապես գրավում է նկարչին: Մեկ տարի անց նրանք ամուսնանում են: Թեոդոսիայի պատկերասրահում պահպանվում է Աննա Բուռնազյանի դիմանկարը՝ նկարված Այվագովսկու ձեռքով:

Այվագովսկին հիմնականում ծովանկարներ է նկարել, ստեղծել Դրիմի ծովափնյա քաղաքների դիմապատկերների շարքեր: Նրա կարիերան չափազանց հաջողված էր. պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, ստացել դերծովակայի կոչում: 1845 թվականից ապրել է Թեոդոսիայում, որտեղ իր վաստակած գումարներով բացել է արվեստների դպրոց (հետագայում այն դարձել է Նովոռոսիայի գեղարվեստական կենտրոններից մեկը) և պատկերասրահ (1880 թ.), հիմնադրել է գեղանկարչության Կիմերյան դպրոցը, դարձել Թեոդոսիա-Չանկոյ երկաթգծի շինարարության նախաձեռնողը (կառուցվեց 1892 թ.): Ակտիվորեն մասնակցել է հայրենի քաղաքի բարեկարգմանը, ամեն կերպ աջակցել նրա ծաղկմանն ու բարգավաճմանը:

Հետաքրքրվել է հնագիտությամբ, զբաղվել Դրիմի հուշարձանների պահպանության հարցերով, մասնակցել 90-ից ավելի կուրգանների ուսումնասիրմանը (գտածոների մի մասը պահպանվում է Էրմիտաժի պահոցներում): Իր միջոցներով կառուցել է Թեոդոսիայի հնությունների թանգարանի նոր շենքը: Հնագիտությանը մատուցած ծառայությունների համար ընտրվել է Օդեսայի պատմության և հնությունների ընկերության իսկական անդամ:

1895 թ. ապրիլին Նոր Նախիջևանում (Դոնի Նախիջևան) Ամենայն հայոց կաթողիկոս **Մկրտիչ Խրիմյանին** (1820-1907) հանդիպելուց հետո, Այվազովսկին այցելում է Տազանրոգում բնակվող իր հին ծանոթին՝ Յ. Մ. Սերեբրյակովին: Դա նկարչի երկրորդ այցն էր Տազանրոգ. առաջինը եղել էր 1835 թվականին, երբ նա այցելել էր Ալեքսանդր Առաջինի պալատ: Տազանրոգում Այվազովսկին իր՝ **«Ջրերի վրայով քայլելը»** կտավը նվիրեց կայսերական ուղղափառ պաղեստինյան ընկերության մատուռին (ի դեպ, Տազանրոգում այդ ընկերության ներկայացուցիչն ականավոր կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկու Իպոլիտ եղբայրն էր): Այս ընծայի համար նկարիչն արժանանում է անձամբ ընկերության նախագահի՝ մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչի շնորհակալությանը:

Այվազովսկին մահացել է 82 տարեկան հասակում, 1900 թվականի մայիսի 2-ին: Մահից անմիջապես առաջ ավարտել է **«Ծովածոց»** նկարը, իսկ հենց մահվան օրը սկսել է նկարել **«Թուրքական նավի պայթեցումը»** կտավը, որը մնացել է անավարտ:

Թեոդոսիայի Ի.Կ.Այվազովսկու անվան պատկերասրահի կայքէջում այսպես է նկարագրված հանճարեղ նկարչի կյանքի վերջին օրը.

«1900 թվականի ապրիլի 19-ի (մայիսի 2-ի) առավոտյան նկարիչը թեոդոսիական իր արվեստանոցում սովորականի պես տեղավորվեց նկարակալի առջև, ոչ մեծ ենթաշրջանակին քաշեց մաքուր կտավը՝ պատրաստվելով իրագործել իր վաղեմի ցանկությունը՝ մեկ անգամ ևս պատկերել թուրքերի դեմ հույն աշխարհագրոբայիների մղած ազատագրական պայքարի հերոսական դրվագներից: Որպես սյուժե՝ նա ընտրել էր իրական մի դեպք՝ անվեհեր հույն մարտիկ Կոնստանտին Կանարիսի սխրանքը՝ Քիոս կղզու մոտ թուրքական ծովակալական նավի պայթեցումը: Օրվա ընթացքում նկարիչը գրեթե ավարտին հասցրեց նկարը: Խոր գիշերով՝ քնի պահին անակնկալ մահը կտրեց Այվազովսկու կյանքի թելը»:

«Թուրքական նավի պայթեցումը» անավարտ կտավը այդպես էլ մնացել է նկարակալի վրա, նկարչի արվեստանոցում, որը, ինչպես նաև՝ նկարչի ողջ տունը, վերածվել է թանգարանի:

Այվազովսկու ստեղծագործությանը բարձր գնահատական են տվել նրա շատ ու շատ ժամանակակիցներ, իսկ նկարիչ **Ի.Ն.Կրամսկոյը** գրել է. «Ով ինչ էլ ասի, Այվազովսկին բոլոր դեպքերում առաջին մեծության աստղ է և՛ ո՛չ միայն մեզանում, այլև ընդհանրապես արվեստի պատմության մեջ»:

Այվազովսկին թաղված է Թեոդոսիայում՝ հայոց միջնադարյան Սուրբ Սարգիս եկեղեցու բակում: 1903 թվականին նկարչի այրին մարմարե շիրմաքար է տեղադրել, որը իտալացի քանդակագործ **Լ. Քիոջոլիի** աշխատանքն է: Շիրմաքարին գրաբար փորագրված են պատմահայր Մովսես Խորենացու խոսքերը. «Մահկանացու ծնեալ անմահ գիւրն յիշատակ եթող»:

Աղբյուրը՝ «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան

Հովհաննես Այվազովսկու մասին հեռուստահաղորդումների համացանցային հղումներ

1. <https://www.youtube.com/watch?v=snQhpS-DzdQ> Արփեն Մովսեսյան, Հայից Հայ - Այվազովսկի եղբայրներ,
2. <https://www.youtube.com/watch?v=HF5wt9zNfTI> ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ - ИВАН АЙВАЗОВСКИЙ - IWAN AIWASOWSKI,
3. <https://www.youtube.com/watch?v=TVdFixszkgQ> Հովհաննես Այվազովսկի,
4. <https://www.youtube.com/watch?v=nMSbgOoFQtM> Հանրագիտարան. Այվազովսկի,
5. <https://www.youtube.com/watch?v=KRW72Ik8J8E> ՆԿԱՐԻՉԸ՝ Հովհաննես Այվազովսկի,
6. <https://www.youtube.com/watch?v=Z93QgHiTfoo> 9-րդ ԱԼԻՔ,